Հաստատում եմ
______________Հ.Քուչկյան
15.08.2023թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԳՆՈՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՐԱՐ (ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ) ԾՐԱԳԻՐ

## ԳՈՐԾԱՐԱՐ (ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ) ԾՐԱԳԻՐ
## ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ

«ԷՐԵԲՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի

ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ _3_ ԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ

**1. Ընդհանուր տեղեկություններ**

1.1 Տեղեկություններ գործարար (ներդրումային) ծրագիրը իրականացնող իրավաբանական անձի (այսուհետ՝ Կազմակերպություն) մասին,

1.1.1 Կազմակերպության լրիվ անվանումը *«Էրեբունի բժշկական կենտրոն»*

1.1.2 Կազմակերպության ձևը *փակ բաժնետիրական ընկերություն*

1.1.3 Կազմակերպության ստեղծման (վերակազմակերպման) ժամկետը________

1.1.4 Կազմակերպության գրանցման վկայականի համարը *278.120.03185*

1.1.5 Գրանցման վայրը և տարեթիվը *ՀՀ, ք.Երևան, 23.09.2002*

1.1.6 Գործունեության իրականացման վայրը *ՀՀ, ք.Երևան, Տիտոգրադյան 14*

1.1.7 Փոստային հասցեն *ՀՀ, ք.Երևան, Տիտոգրադյան 14*

1.1.8 Կազմակերպության կապիտալի չափը (առկայության դեպքում) *553.854.000 (հինգ հարյուր հիսուներեք միլիոն ութ հարյուր հիսունչորս հազար)* դրամ.

1.1.9 Նույնացման ծածկագիր 04905301, հարկ վճարողի հաշվառման համարը 00403857,

1.1.10 Տվյալներ (հեռախոս/ֆաքս, էլեկտրոնային հասցե) +37410471100, hospital@erebouni.am, վեբ կայքեր https://www.erebunimed.com

(առկայության դեպքում)

1.2 Գործարար (ներդրումային) ծրագիրը հաստատվել է Կազմակերպության տեղաբաշխված բաժնետոմսերի միակ սեփականատիրոջ 20 23 թ. օգոստոսի 15 -ի N 2 - որոշմամբ:

**2. Կազմակերպության կողմից գործարար (ներդրումային) ծրագրի նպատակները և խնդիրները**

2.1 Կազմակերպության նպատակներն են,

1) զարգացնել ՀՀ առողջապահության ոլորտը,

2) բարձրացնել ուռուցքաբանական ծառայությունների հասանելիությունը և որակը

3) ընդլայնել բուժհաստատության գործունեությունը ավելացնելով ուռուցքաբանական ծառայությունների շարքը,

2.2 Կազմակերպության խնդիրներն են,

1) բուժհաստատության մոտակայքում ձեռքբերել համապատասխան շինություն կամ տարածք:

**3. Կազմակերպության կողմից իրականացվող գործարար (ներդրումային) ծրագիրը**

3.1 Գործարար (ներդրումային) ծրագրի ընդհանուր նկարագիրը և իրականացման հիմնական նպատակը

Սույն ծրագիրն իրենից ներկայացնում է բայլերի հաջորդականություն՝ ուղղված նոր կառույցի ձեռքբերմանը, վերանորոգմանը, կահավորմանը և ճառագայթային բժշկության կենտրոնին կից լրացուցիչ մասնաշենքի ստեղծ, որտեղ կմատուցվեն քիմիոթերապիայի, ռեաբիլիտացիայի և այլ ծառայություններ

և նպատակ ունի զարգացնել ՀՀ-ում առողջապահության ոլորտը, ընդլայնել բուժհաստատության գործունեությունը

**3.2 Տեղեկատվություն գործարար (ներդրումային) ծրագիրը իրականացնելու մասին.**

Սույն ներդրումային ծրագիրն իրականացնում են

«Էրեբունի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից

(անմիջականորեն)

սակայն, ըստ անհրաժեշտության կարող են կնքվել փարաբնույթ պայմանագրեր

(կամ կապալային կամ այլ պայմանագիր կնքելու միջոցով)

3.3 Ծրագրի գործունեության ոլորտը.

Սույն ծրագիրն իրականացվում է հետևյալ ոլորտներում՝

***բժշկական օգնության և սպասարկման ոլորտում***

(հյուրանոցային բիզնես, տուրիզմ, բնակարանաշինություն և այլն)

3.4 Գործարար (ներդրումային) ծրագրի նորմատիվաիրավական կարգավորումը.

Սույն ծրագրով իրականացվող միջոցառումներն են.

***Լիցենզիա պահանջող գործառույթները իրականացվելու են համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից:***

**3.5 Սույն ծրագրի շրջանակներում անհրաժեշտ բյուջեն և իրականացման ժամանակահատվածը.**

3.5.1 Սույն գործարար (ներդրումային) ծրագրի բյուջեն կազմում է 350.000.000 (երեք հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ,

3.5.2 Սույն գործարար (ներդրումային) ծրագրի իրականացման համար սահմանված 3-ամյա ժամկետում, ներդրողը նախատեսում է կատարել նվազագույնը 350.000.000 երեք հարյուր հիսուն միլիոն ՀՀ դրամի ներդրում

3.6 Սույն ծրագրի շրջանակներում անհրաժեշտ բյուջեն ձևավորվում է՝

***«էրեբունի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի միջոցներով***

(սեփական միջոցներ)

3.7 Գործարար (ներդրումային) ծրագրով նախատեսված ֆինանսավորման ուղղությունները

Սույն ծրագրի շրջանակներում ներդրումային բյուջեն՝ 350.000.000 (երեք հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամը ֆինանսավորելու է հետևյալ ուղղությունները՝ վերանորոգման աշխատանքների իրականացում, կահավորում, բժշկական սարքավորումների ձեռքբերում և այլ անհրաժեշտ ծախսերի կատարում:

**4 Գործարար (ներդրումային) ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները**

Սույն ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվի բժշկական նպատակներով օգտագործվող հասարակական նշանակության կառույց, որը կնպաստի բուժհաստատության գործունեության ընդլայնմանը, բնակչությանը ուռուցքաբանական ծառայությունների հասանելիության բարձրացմանը:

**5 Գործարար (ներդրումային) ծրագրի իրականացման ռիսկերը և մեղմացման միջոցառումները**

5.1 Սույն ծրագրի իրականացման ժամանակահատվածում հնարավոր ռիսկերը.

***Ծրագրի իրականացման հիմնական ռիսկ է հանդիսանում փարերային աղետները, արտակարգ իրավիճակները և պատերազմական գործողությունները:***

5.2 Հնարավոր ռիսկերի մեղմացման նպատակով իրականացվող միջոցառումները.

***Նշված ռիսկերը մեղմացնելու համար նախատեսվում է խրագրի արագ իրականացում, ռիսկին ենթարկվածությունը նվազեցնելու համար:***